

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

## **Մագիստրոսական ատենախոսության օրինակելի կառուցվածքը**

1. Տիտղոսաթերթ 1 էջ
2. Բովանդակություն 1-2 էջ
3. Համառոտագիր 0,5 էջ
4. Ներածություն 1-2 էջ
5. Գրական ակնարկ 10 (գլուխ 1)
6. Ուսումնասիրության խնդիրը, նպատակները և մեթոդները - 3-5 էջ
7. Հիմնական գլուխներ
8. Տնտեսական արդյունավետության գնահատումը 2-3 էջ
9. Եզրակացություններ և առաջարկություններ 2 էջ
10. Գրականության ցանկ ( 20-25 անուն )
11. Հավելվածներ ...

Հիմնական գլուխները ձևակերպվում են՝ ելնելով մագիստրոսական մասնագիտությունից, թեզի թեմայի բնույթից (տնտեսական, փորձնական, գիտական-փորձարարական), մագիստրանտի անհատական աշխատանքային պլանից:

Մագիստրոսական թեզի ընդհանուր ծավալը 60-70 համակարգչային էջ է:

Քանի որ մագիստրոսական ատենախոսությունը աստիճանաշնորհող աշխատանք է, այն գնահատվում է ոչ միայն ըստ տեսական գիտական արժեքների՝ թեմայի արդիականության և ստացված արդյունքների նշանակության, այլ նաև ըստ այդ ստեղծագործության ընդհանուր մեթոդական պատրաստվածության, որը նախ և առաջ արտացոլվում է ձևավորման մեջ: Ձևավորումն ատենախոսության հիմնական բաժինների հերթական դասավորվածությունն է. հիմնական տեքստը ( գլուխներ, ենթագլուխներ և այլն ), ինչպես նաև ուղեկցող-տեղեկատվական բաժինները, որոնք տրամաբանական հաջորդական կապի մեջ են գտնվում: Տիտղոսաթերթը ատենախոսության առաջին էջն է, որը լրացվում է խիստ որոշակի կարգով (հավելված 1): Բովանդակությունում նշվում են ատենախոսության բոլոր բաժիններն ու ենթաբաժինները, դրանց զբաղեցրած էջերն ըստ հերթականության:

### **Ներածության մեջ պետք է պարզաբանել.**

1. Թեմայի արդիականությունը
2. Հետազոտման նպատակը, խնդիրները և մեթոդները
3. Հետազոտության օբյեկտը կամ առարկան
4. Հետազոտության գիտական նորույթը
5. Հրատարակումները

Գրականության ակնարկում հակիրճ տրվում է մագիստրոսական ատենախոսության թեմայով կատարված գիտական հետազոտությունների, գիտության նվաճումների և առաջավոր փորձի համակարգված և քննադատական վերլուծությունը: